ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/43

Բողոքի ներկայացման ամսաթիվը՝ 01.06.2021թ.

Շտկված բողոքի ամսաթիվը՝ 03.06.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ

Պատվիրատու՝ Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» հրատապ բաց մրցույթ

Գնման առարկան՝ հողաբարելավման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Սարգիս Սարգսյան Հարությունի» Ա/Ձ-ի հայտը մերժելու որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձին
հասցե՝ ք.Երևան, Մելիք-Ադամյան փող.1
բողոքը ներկայացնող անձ՝
Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ
Պետական գրանցման համարը՝ 51.883999
Հաշվառման ամսաթիվը 2016-01-11
ՀՎՀՀ 4 7 7 9 6 5 6 1
Հասցեն՝ Արարատի մարզ
Ք.Վեդի Ս.Վարդանյան 1 նրբ.տ13
Տնօրեն՝ Սարգիս Սարգսյան Հարությունի
Էլ փոստ. mariabarseghian@gmail.com

Բողոքի շտկում

1.Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ

Պատվիրատու՝ Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը,որը գտնվում է ք. Երևան, Ա. Արմենակյան 129 հասցեում, հայտարարել է ՝*«ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱԾՁԲ-21/38»ծածկագրով հրատապ բաց մրցույթ /Հողաբարելավման աշխատանքների կատարման/*

Գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ են ներկայացրել Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ,Արարատի Ջերմատնտեսություն ՓԲԸ,Շինարար Ագրո ՍՊԸ:
ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱԾՁԲ-21/38»*ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.05.2021թ.տեղի ունեցած նիստի 2 արձանագրությամբ ընտրված մասնակից է ճանաչվել* Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ն որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից:

2.Բողոքի փաստական և իրավական հիմքերը

ՀՀ Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ հաշվառված է 2016-01-11 համար 51.883999 : 27.01.2021թ. գործունեությունը վերսկսելու վերաբերյալ հարկային տեսչություն է ներկայացրել հայտարարություն: 27.01.2021թ.-ին հայտարարությունը ներկայացնելուց հետո հարկային էլեկտրոնային համակարգում եղել է գործող կարգավիճակում, սակայն պետական գրանցման ռեգիստրում գրանցումից դուրս գալուց հետո հարկային էլեկտրոնային ծրագրում պետք է նշվի հաշվառումից հանված, որի դեպքում չի թույլատրվում ներկայացնել հաշվետվություններ: Սահմանված կարգով հարկային մարմին է ներկայացրել հաշվետվություն ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկի վերաբերյալ, տվյալ ժամանակահատվածում պատշաճ կերպով վճարել է առաջացած հարկերը : *«ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱԾՁԲ-21/38»ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների տվյալների գնահատման արդյունքում* Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն: ՀՀ Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում կազմակերպության կարգավիճակը նշված է հաշվառումից հանված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով ստուգել է մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը: *27.05.2021թ.տեղի ունեցած նիստի 4 արձանագրությամբ* տվյալները որակվել են իրականությանը չհամապատասխանող: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 67-րդ կետը Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի հայտը մերժել:

3.Բողոքի պահանջ---- Առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ և 50 –րդ հոդվածներով

Խնդրում եմ

Դարտավորեցնել՝ «ՀՀ-ԲԾ-Ա-ՀԲՄԱՇՁԲ-21/38»ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Սարգիս Սարգսյան Հարությունի Ա/Ձ-ի հայտը մերժելու որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Հարգանքներով՝ Ա/Ձ Digitally signed by SARGSYAN SARGIS Սարգիս Սարգսյան